

01.12.2022 17:32



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 1-ին թիվ 6-րդ նիստում ամփոփել է 2022 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունների գրավոր առաջադրանքները:

2022 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցել են «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի 107 շրջանավարտ (այդ թվում՝ պարզեցված կարգով վեց ամսյա ժամկետում ուսուցում անցնող շրջանավարտները):

Որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարում են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանում են քննատոմսի և Հանձնաժողովի անդամների հարցերին:

Քաղաքացիական ուղղվածության շրջանավարտները հանձնել են 2 քննություն՝ գրավոր առաջադրանք՝ հայցադիմումի կազմում, և բանավոր փուլ, որի ընթացքում փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ քննական տոմսում նկարագրված խնդրի վերաբերյալ հավակնորդը ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների նշված խնդրին կամ փաստաբանի վարքագծի վերաբերելի կանոնին առնչվող հարցերին, ինչպես նաև քննական տոմսում նկարագրված մասնագիտական խնդրի վերաբերյալ ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների՝ նշված խնդրին կամ վերաբերելի նորմին (իրավական կարգավորմանը) առնչվող հարցերին:

Քրեական ուղղվածության շրջանավարտները հանձնել են 2 քննություն՝ գրավոր առաջադրանք՝ դատավճի դեմ վերաքննիչ բողոքի կազմում, և բանավոր փուլ, որի ընթացքում փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ քննական տոմսում նկարագրված խնդրի վերաբերյալ հավակնորդը ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների նշված խնդրին կամ փաստաբանի վարքագծի վերաբերելի կանոնին առնչվող հարցերին, ինչպես նաև քննական տոմսում նկարագրված մասնագիտական խնդրի վերաբերյալ

ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների՝ նշված խնդրին կամ վերաբերելի նորմին (իրավական կարգավորմանը) առնչվող հարցերին:

Որակավորման քննությունների գրավոր առաջադրանքները փոխանցվել են որակավորման հանձնաժողովին ծածկագրերի (շտրիխ կոդերի) առկայությամբ, որոնցից հնարավոր չէ բացահայտել առաջադրանքի հեղինակի ինքնությունը:

Ծածկագրված առաջադրանքները փոխանցվել է առարկայական քննական հանձնախմբի յուրաքանչյուր ուղղվածությամբ մասնագիտացված երկուական անդամների, որոնք ստուգել և գնահատել են առաջադրանքները:

Առարկայական քննական հանձնախմբի անդամների կողմից գնահատված առաջադրանքները որակավորման հանձնաժողովին վերադարձվելուց հետո, գումարվել է նիստ և որակավորման հանձնաժողովը գնահատել է գրավոր առաջադրանքները՝ ըստ ծածկագրերի:

2022թ. դեկտեմբերի 1-ին ժամը 19:00 (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) հրավիրված շրջանավարտների ներկայությամբ բացվելու են արկղերը, որոնց մեջ պարունակվում են քննություն հանձնողներին նույնականացնող առաջադրանքների մյուս օրինակները և ծածկագրերը:

Որակավորման քննությունները չեն հանձնել **10 աշխատանքների հեղինակներ, իսկ 1 հավակնորդ** գրավոր քննության անցկացման կարգի խախտման պատճառով որակավորման հանձնաժողովի կողմից կայացված որոշման արդյունքում **հեռացվել քննությունից:**

Որակավորման քննություններին տարբեր օրերին չեն ներկայացել ընդհանուր **4** շրջանավարտներ:

Բեռնել որակավորման քննությունների գրավոր առաջադրանքների գնահատականներն ամփոփելու մասին 2022թ. դեկտեմբերի 1-ի N 6/1-Ա որոշումը

ՔՐԵԱԿԱՆ ՄՈՂՈՒԼ

Բեռնել դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՈՂՈՒԼ

**Բեռնել հայցադիմում կազմելու վերաբերյալ
գրավոր առաջադրանքների ամփոփման
արդյունքում գնահատված ծածկագրերի
հեղինակների ցանկը**

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```